



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**«ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»**  
**ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

25 » Եպրիլի 2019թ. 44-Ձ

ք. Երևան

**ՀՐԱՄԱՆ**

**ՍՏՈՒԳԱԶԱՓՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ և ԱՆՀԱՏ**  
**ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՕ-22-Ն առ 08.02.2012թ. 16-րդ հոդվածի 8-րդ կետը և «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ կանոնադրության դրույթները, ինչպես նաև ՀՀ Հաշվեքննիչ պալատի 14.10.2019թ. №22/9 որոշմամբ հաստատված ընթացիկ եզրակացությունը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Չափման միջոցների ստուգաչափում իրականացնող ստորաբաժանումների ղեկավարներին.

- «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՕ-22-Ն 16-րդ հոդվածի 8-րդ կետի կետի կատարումն ապահովելու նպատակով.

- ծանուցել իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին՝ չափման միջոցները սահմանված կարգով ստուգաչափման ներկայացնելու մասին, չափման միջոցի ստուգաչափման վկայականի գործողության ժամկետի ավարտից 30 օր առաջ, համաձայն սույն հրամանի հավելվածի:

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ տնօրենի առաջին տեղակալին:

**Տնօրենի**

**պաշտոնակատար**

**ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ**

Հավելված  
«Չափագիտության ազգային  
ինստիտուտ» ՓԲ ընկերության  
Տնօրենի պաշտոնակատարի 2019  
թվականի 25<sup>րդ</sup>ի № 44-Ն հրամանի  
**Հայտատուի տվյալները՝**

(հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստի հասցե)

**Հարգելի գործընկեր**

Ծանուցում ենք Ձեզ, որ Ձեր կազմակերպությանը պատկանող Օրենսդրական  
չափագիտության ենթակա ոլորտներում կիրառվող \_\_\_\_\_  
ստուգաչափման ժամկետը լրանում է \_\_\_\_\_: (ՉՄ անվանումը)  
(Անսաթիվ)

Տեղեկացնում ենք, որ, Հիմք ընդունելով «Չափումների միասնականության ապահովման  
մասին» Հայաստանի Հանրապետության 22 առ 08.20.2012թ Օրենքի 16-րդ հոդվածի 1,7,10-րդ  
կետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափման միջոցները  
ենթակա են ստուգաչափման: Չափման միջոց կիրառող իրավաբանական անձինք և անհատ  
ձեռնարկատերերը պարտավոր են իրենց կողմից առևտրային նպատակներով կիրառվող  
Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափման միջոցները ենթարկել  
ստուգաչափման:

Օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չստուգաչափված չափման  
միջոցների շահագործումն արգելվում է: Չստուգաչափված Չափման միջոցի շահագործումն ըստ  
վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքի. առաջացնում է վարչական  
պատասխանատվություն. (22 առ 08.20.2012թ. ՀՕ Գլուխ 6 Հոդված 25՝ Սույն օրենքի դրույթները  
խախտող անձինք կրում են պատասխանատվություն ՀՀ օրենքներով սահմանված կարգով):

Հիշեցում. Լիազորված կազմակերպության կողմից ՉՄ ստուգաչափումն իրականացվում է  
հայտատուի կողմից հաստատված ստուգաչափման հայտի ներկայացման դեպքում կամ  
ստուգաչափման իրականացման վերաբերյալ պայմանագրերի հիման վրա: ՉՄ ստուգաչափման  
ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվությունը Լիազորված կազմակերպության կողմից մատչելի  
եղանակով ներկայացվում է հայտատուներին, ինչպես նաև տեղադրվում է Լիազորված  
կազմակերպության պաշտոնական կայքում (<http://metrology.am/hy/offers/chm-stougachapoum.html>): ՉՄ ստուգաչափումն իրականացվում է Հայաստանի  
Հանրապետությունում գործող նորմատիվ իրավական ակտերի, ստուգաչափման մեթոդիկաների  
հիման վրա:

Հարգանքով,

Չափագիտության Ազգային Ինստիտուտ ՓԲԸ

ք. Երևան 0051, Կոմիտասի 49/4

info@metrology.am

www.metrology.am

Հեռ. (+347 10)232600